23 նոյեմբեր, 2017թ. Երևան

Կամավորների ինստիտուտի վերաբերյալ նոր օրինագիծը սահմանափակում և վերահսկելի է դարձնում ՔՀԿ-ների գործունեությունը

Կամավորական գործունեությունը կարգավորելուն ուղղված նոր օրենքի նախագծում մի շարք դրույթներ խնդրահարույց են և կխոչընդոտեն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) գործունեությանը:

Նոյեմբերի 22-ին օրենքի նախագծի վերաբերյալ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՔՀԿ ներկայացուցիչների կողմից քննարկում էր կազմակերպվել՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը նշեց, որ նախագիծը լուծելու է այս ոլորտում վերհանված բոլոր խնդիրները:

Սակայն քննարկմանը տեսակետ հնչեց, որ նախագծով փորձ է արվում սահմանափակել և պետության կողմից վերահսկելի դարձնել ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը.

«Ես այս եզրահանգմանն եմ եկել առաջին հերթին այն բանի համար, որ այս նախագծի կարիքի հիմնավորող փաստեր, վիճակագրություն չկա: Երկրորդ՝ նախագիծը սահմանում է որոշակի ոլորտներ, որտեղ կամավորություն չի կարելի անել: Երրոդ՝ նախագիծը սահմանափակում է, թե քանի կամավոր կարող են ունենալ»,- ասաց Հայկական բարեգործական ընդհանուր միության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների «Կամուրջ» ծրագրի ղեկավար Արսեն Ստեփանյանը:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի փաստաբան Մարիամ Զաղոյանը նշում է, որ նախագծի ամենախնդրահարույց դրույթներից մեկն այն է, որով թույլատրվում է կազմակերպությանը կամավորներ ներգրավվել միայն իր աշխատակազմի մինչև 5 տոկոսի համամասնությամբ. «Պարզ մաթեմատիկական հաշվարկ անելու դեպքում տեսնում ենք, որ կազմակերպությունը պետք է քսան աշխատակից ունենա, որ կարողանա ներգրավել մեկ կամավոր: Այս դեպքում ինչպե՞ս կարող է օրենքը խրախուսել կամավորների ինստիտուտի զարգացմանը, եթե իրականում խոչընդոտում է»:

Այս հարցի վերաբերյալ «Թրանսփարենսի ինտերնեյշնլ» ՀԿ փաստաբան Հերիքնազ Տիգրանյանը օրինակ բերեց, որ իրենց կազմակերպության կանոնադրական ուղղություններից մեկը ընտրություններում դիտորդական առաքելության իրականացումն է. «Սահմանադրական հանրաքվեի ժամանակ մենք

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 00

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

ունեցել ենք կամավոր շուրջ 4000 դիտորդ, բայց մեր աշխատակազմը 16 հոգուց է բաղկացած: Մենք չենք կարող այս կանոնը պահել»:

Քննարկման մասնակիցները բարձրաձայնեցին նաև մյուս խնդրահարույց հարցերի մասին. նախագծով ոչ առևտրային կազմակերպությունների համար պարտավորություն է սահմանում պայմանագրեր կնքել բոլոր կամավորների հետ, ինչը շատ դեպքերում հակայական բեռ կարող է դառնալ կազմակերպության համար: Օրինակ, 4000 դիտորդի հետ պայմանագիր կնքելու դեպքում նույնիսկ պետք կլինի ամբողջ իրավաբանական վարչություն ունենալ:

Պարտավորություն է սահմանվում նաև բոլոր կամավորների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, քանի որ կամավորների ռեեստր պետք է ստեղծվի. «Սա անհամաչափ բեռ է դնում ոչ առևտրային կազմակերպությունների վրա: Բացի սրանից, կարող են լինել դեպքեր, երբ անձը չի ցանկանում հայտնվել այդ ռեեստրում, օրինակ, կամավոր կերպով պայքարում է կոռուպցիայի դեմ և չի ցանկանում, որ իր անունը երևա այդ ցանկում»,- ասաց Մ. Զաղոյանը:

Քննարկման ավարտին մասնակիցները որոշեցին նախագծի խնդրահարույց դրույթների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ միասնական դիրքորոշմամբ դիմել ՀՀ կառավարությանը: Նաև հույս հայտնեցին, որ պետական դիրքորոշումը այս հարցում կփոխվի, հակառակ դեպքում այս քայլը կդիտարկվի որպես հետընթաց:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոպի» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ 9 թիրախային ոլորտում, որոնցից են արդարադատությունը, կրթությունը և բիզնեսը:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայասատանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00; հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; URL՝ http://www.armla.am, http://ccd.armla.am, էլ. փոստ՝ info@armla.am:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: